Հայաստանի Հանրապետության բանկերում եւ տարադրամի փոխանակման կետերում արտարժույթի փոխանակման ծավալի համեմատական վերլուծությունը 2023 և 2024թթ. մարտ-մայիս ամիսներին

Հեղինակ՝ Նարեկ Վերանյան[i]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական մամուլում եւ սոցիալական ցանցերում լայն բանավեճի առարկա է դարձել 2024թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի Հանրապետությունում արտարժույթի շրջանառության ծավալի հավանական աճը:

Սույն հետազոտության նպատակն է համեմատել ՀՀ բանկերում եւ տարադրամի փոխանակման կետերում 2023 եւ 2024 թվականների մարտ-մայիս ամիսներին իրականացված արտարժույթի փոխանակման ծավալները:

ՄԵԹՈԴՆԵՐ

ՀՀ Կենտրոնական բանկից (ԿԲ) ձեռք է բերվել ՀՀ մարզերի եւ Երեւան քաղաքի տարադրամի փոխանակման կետերում 2023 եւ 2024 թվականների մարտի 1-ից մինչեւ մայիսի 17-ն ընկած ժամանակահատվածներում իրականացված արտարժութի փոխանակման գործարքների մասին տեղեկատվություն,[1,2] որտեղ ներկայացված են արտարժույթի առքի եւ վաճառքի ծավալներն ըստ ամսաթվերի, ինչպես նաեւ օրվա սահմանված փոխարժեքը եւ գործունեության հասցեն (ք. Երեւան, մարզեր):[3]

ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքից ձեռք է բերվել նույն ժամանակահատվածներում ՀՀ բանկերում իրականացված նույնատիպ գործարքների մասին ամփոփ զեկույցը՝ «Արժույթի շուկայի սփոթ շրջանառությունը»:[4,5]

Հաշվարկվել է ՀՀ բանկերի եւ փոխանակման կետերի կողմից մարտի 1-ից մինչեւ մայիսի 17-ն ընկած ժամանակահատվածում իրականացված արտարժույթի գումարային առքի ծավալները համապատասխանաբար 2023 եւ 2024 թվականներին:

Կատարվել է բանկերի եւ փոխանակման կետերի կողմից 2023թ. եւ 2024թ. վերոնշյալ ժամկետներում արտարժույթի ընդհանուր (ներառյալ դոլար, եվրո, ռուբլի) առքի միջին օրական ծավալների համեմատություն, ինչպես նաեւ ըստ արտարժույթի տեսակի (համապատասխանաբար դոլարի, ռուբլու, եվրոյի համար) եւ մարզերի, բացի Սյունիքի մարզից: ԿԲ-ից ստացվել է պաշտոնական բացատրության, որ ՀՀ Սյունիքի մարզում նշված ժամանակահատվածում գործունեություն ծավալած տարադրամի փոխանակման կետեր չեն եղել:[6,7]

Այնուհետեւ, տարբեր օրերի տարադրամի փոխարժեքի տարբերության ազդեցությունը չեզոքացնելու նպատակով իրականացվել է բազմափոփոխական գծային ռեգրեսիոն (multivariable linear regression) վերլուծություն՝ խմբերը համեմատելով տարադրամի փոխարժեքի հավասարացումից հետո: Ռեգրեսիոն գործակիցները ներկայացնում են արտարժույթի առքի միջին օրական ծավալի տարբերությունը դրամով 2024 եւ 2023 թվականների միջեւ, տարադրամի փոխարժեքի հավասարեցումից հետո (աճի պարագայում դրական, նվազման դեպքում բացասական):

Վերլուծության համար օգտագործվել է Stata/BE 18.0 (StataCorp LCC, College Station, TX):[8,9] Stata ծրագրով վերլուծության հրահանգները ներկայացված են:[10]

Արդյունքները ներկայացված են ստորեւ բերված աղյուսակներում, համեմատությունը համարվել է վիճակագրորեն հավաստի, եթե $p<0.05$:

ԱՐԴՅՈՒՆՔԵՐ

Արտարժույթի գումարային առքի ծավալների համեմատությունը 2023 եւ 2024թթ.

Բանկեր

ՀՀ բանկերում մարտի 1-ից մայիսի 17-ն ընկած ժամանակահատվածում արտարժույթի ներբանկային ընդհանուր (ներառյալ դոլար, եվրո, ռուբլի) գումարային առքի ծավալը 2024թ.-ին գերազանցել է 2023թ.-ի նույն ժամանակահատվածում ընդհանուր գումարային առքի ծավալը 117,469,172,189.2 ՀՀ դրամով, որը եղել է բացառապես ռուսական ռուբլու ավելացած առքի ծավալի արդյունքում (Աղուսյակ 1): Ռուբլու ներբանկային գումարային առքի ծավալը 2023թ.-ի նշված ժամանակաշրջանում կազմել է 598,430,445,806.3 ՀՀ դրամ, իսկ 2024թ.-ին՝ 853,445,391,104.1 ՀՀ դրամ, աճը կազմել է 255,014,945,297.8 ՀՀ դրամ, մինդեռ դոլարի եւ եվրոյի ներբանկային գումարային առքի ծավալների հաշվեկշիռը 2023թ.-ի համեմատությամբ 2024թ.-ին եղել է բացասական (Աղուսյակ 1):

Տարադրամի փոխանակման կետեր

ՀՀ տարադրամի փոխանակման կետերում մարտի 1-ից մինչեւ մայիսի 17-ն ընկած ժամանակահատվածում արտարժույթի ընդհանուր (ներառյալ դոլար, եվրո, ռուբլի) գումարային առքի ծավալը 2024թ.-ին գերազանցել է 2023թ.-ի ընդհանուր գումարային առքի ծավալը 26,450,996,259.7 ՀՀ դրամով, որը եւս եղել է բացառապես ռուսական ռուբլու ավելացած առքի ծավալի արդյունքում (Աղուսյակ 1): Տարադրամի փոխանակման կետերում ռուբլու գումարային առքի ծավալը 2023թ.-ի նշված ժամանակաշրջանում կազմել է 26,429,463,966.0 ՀՀ դրամ, իսկ 2024թ.-ին՝ 52,931,413,249.3 ՀՀ դրամ, աճը կազմել է 26,501,949,283.3 ՀՀ դրամ, մինդեռ դոլարի եւ եվրոյի գումարային առքի ծավալների հաշվեկշիռը 2023թ.-ի համեմատությամբ 2024թ.-ին կրկին եղել է բացասական (Աղուսյակ 1):

Արտարժույթի առքի միջին օրական ծավալների համեմատությունը 2023 եւ 2024թթ.

Բանկեր

Ընդհանուր (ներառյալ դոլար, եվրո, ռուբլի). ՀՀ բանկերում մարտի 1-ից մայիսի 17-ն ընկած ժամանակահատվածում արտարժույթի ներբանկային առքի ընդհանուր (ներառյալ դոլար, եվրո, ռուբլի) միջին օրական ծավալը 2023թ.-ին կազմել 8,900,000,000.0 ՀՀ դրամ, իսկ 2024թ.-ին՝ 9,660,000,000.0 ՀՀ դրամ, սակայն տարբերությունը վիճակագրորեն հավաստի չէ ($p=0.138$): Արտարժույթի փոխարժեքի հավասարեցումից հետո 2024թ.-ին ընդհանուր (ներառյալ դոլար, եվրո, ռուբլի) միջին օրական ծավալը գերազանցել է 2023թ. միջին օրական ծավալը 808,000,000.0 ՀՀ դրամով, սակայն աճը կրկին եղել է վիճակագրորեն ոչ հավաստի ($p=0.151$) (Աղուսյակ 2):

Ըստ արտարժույթի տեսակի. Նկարագրված արտարժույթի ներբանկային առքի ընդհանուր միջին օրական ծավալի աճը եղել է բացառապես ի հաշիվ ռուբլու:

2023թ.-ին ռուբլու ներբանկային առքի միջին օրական ծավալը կազմել է 11,500,000,000.0 ՀՀ դրամ, իսկ 2024թ.-ին՝ 16,400,000,000.0 ՀՀ դրամ, վիճակագրական հավաստի տարբերությամբ ($p<0.001$): Ռուբլու փոխարժեքի համապատասխանեցումից հետո, ռուբլու ներբանկային առքի միջին օրական ծավալը 2024թ-ին ավելացել է 11,700,000,000.0 ՀՀ դրամով՝ պահպանելով վիճակագրական հավաստիությունը ($p<0.001$) (Աղուսյակ 2):

Տարադրամի փոխանակման կետեր

Ընդհանուր (ներառյալ դոլար, եվրո, ռուբլի): ՀՀ մարզերում եւ Երեւան քաղաքում գործող տարադրամի փոխանակման կետերում մարտի 1-ից մայիսի 17-ն ընկած ժամանակահատվածում արտարժույթի առքի ընդհանուր (ներառյալ դոլար, եվրո, ռուբլի) միջին օրական ծավալը 2023թ.-ին կազմել է 11,800,000.0 ՀՀ դրամ, իսկ 2024թ.-ին՝ 25,200,000.0 ՀՀ դրամ, վիճակագրորեն հավաստի տարբերությամբ ($p<0.001$): Փոխարժեքի համապատասխանեցումից հետո արտարժույթի առքի ընդհանուր (ներառյալ դոլար, եվրո, ռուբլի) միջին օրական ծավալի աճը կազմել է 14,200,000.0 ՀՀ դրամ, պահպանելով վիճակագրական հավաստիությունը ($p<0.001$) (Աղյուսակ 3):

Փոխարժեքի համապատասխանեցումից հետո արտարժույթի առքի ընդհանուր (ներառյալ ռոլար, եվրո, ռուբլի) միջին օրական ծավալի առավելագույն տարբերությունը գրանցվել է Լոռվա մարզում (41,800,000.0 ՀՀ դրամ, $p<0.001$) եւ ք. Երեւանում (38,900,000.0 ՀՀ դրամ, $p<0.001$) (Աղյուսակ 3):

Ըստ արտարժույթի տեսակի: Ըստ արտարժույթի տեսակի կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ փոխանակման կետերում դոլարի եւ եվրոյի փոխանակման ծավալները, չնայած որոշ հարաբերականորեն ոչ մեծ փոփոխությունների տարբեր մարզերի ներսում, ամբողջ հանրապետության մասշտաբով վիճակագրորեն հավաստի կերպով չեն տարբերվում 2023 եւ 2024 թվականներին (Աղյուսակ 4,5):

Ամբողջ հանրապետության մասշտաբով ընդհանուր առմամբ տարադրամի փոխանակման կետերում ռուբլու առքի միջին օրական ծավալը 2023թ.-ի նշված ժամանակահատվածում կազմել է 34,600,000.0 ՀՀ դրամ, իսկ 2024թ.-ին՝ 75,400,000.0 ՀՀ դրամ, հավաստի վիճակագրական տարբերությամբ ($p<0.001$) (Աղյուսակ 6): Ռուբլու փոխարժեքի համապատասխանեցումից հետո ամբողջ հանրապետության մասշտաբով ընդհանուր առմամբ ռուբլու առքի միջին օրական ծավալի աճը կազմել է 135,000,000.0 ՀՀ դրամ՝ պահպանելով վիճակագրական հավաստիությունը ($p<0.001$):

Ռուբլու առքի միջին օրական ծավալն առավելագույնն է եղել Երեւան քաղաքում ինչպես 2023թ.-ին (137,000,000.0 ՀՀ դրամ), այնպես էլ 2024թ.-ին (250,000,000.0 ՀՀ դրամ): Փոխարժեքի համապատասխանեցումից հետո ռուբլու առքի միջին օրական ծավալի աճը եւս առավելագույնն է եղել Երեւան քաղաքում, կազմելով 249,000,000.0 ՀՀ դրամ ($p<0.001$), որին հաջորդում է Կոտայքի մարզը (61,600,000.0 ՀՀ դրամով, $p<0.001$), այնուհետեւ Արմավիրի մարզը (3,117,726.0 ՀՀ դրամով, $p<0.001$): Լոռու մարզում առկա հարաբերականորեն մեծ աճը (87,500,000.0 ՀՀ դրամով) ձգտում է վիճակագրական հավաստիության ($p=0.086$): Որոշ մարզերում դիտարկվում է ռուբլու առքի միջին օրական ծավալների նվազում, սակայն ավելի փոքր ծավալով (Աղյուսակ 6):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2024թ. մարտի 1-ից մայիսի 17-ն ընկած ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ բանկերում դիտվում է ռուբլու առքի միջին օրական ծավալի աճ (11,700,000,000.0 ՀՀ դրամով միջին օրական ծավալի աճ փոխարժեքի համապատասխանեցումից հետո, $p<0.001$), դոլարի առքի միջին օրական ծավալի նվազում (2,400,000,000.0 ՀՀ դրամով միջին օրական ծավալի նվազում փոխարժեքի համապատասխանեցումից հետո, $p<0.001$), ինչպես նաեւ եվրոյի առքի միջին օրական ծավալի նվազման միտում (323,000,000.0 ՀՀ դրամով միջին օրական ծավալի նվազման միտում փոխարժեքի համապատասխանեցումից հետո, $p=0.056$):

2024թ. մարտի 1-ից մայիսի 17-ն ընկած ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ տարադրամի փոխանակման կետերում, չնայած որոշ մարզերում առկա տարաբնույթ փոփոխությունների, ամբողջ հանրապետության մասշտաբով ընդհանուր առմամբ գրանցվել է արտարժույթի առքի միջին օրական ծավալի աճ (14,200,000.0 ՀՀ դրամով միջին օրական ծավալի աճ փոխարժեքի համապատասխանեցումից հետո, $p<0.001$), որը եղել է բացառապես ռուսական ռուբլու առքի միջին օրեկան ծավալի աճի արդյունքում (135,000,000.0 ՀՀ դրամով միջին օրական ծավալի աճ փոխարժեքի

համապատասխանեցումից հետո, $p<0.001$), մինչդեռ դոլարի եւ եվրոյի վիճակագրորեն հավաստի փոփոխություն չի գրանցվել: Առավելագույն աճ եղել է մայրաքաղաք Երեւանում, որին հաջորդում են Կոտայքի եւ Արմավիրի մարզերը: Լոռու մարզում առկա հարաբերականորեն մեծ տարբերությունը ձգտում է վիճակագրական հավաստիության:

Աղյուսակներ

Աղյուսակ 1, Արտարժույթի առքի գումարային ծավալը մարտի 1-ից մայիսի 17 ընկած ժամանակահատվածում

	Ներբանկային գործարքներ			Փոխանակման կետերի գործարքներ		
	2023թ.	2024թ.	Տարբերություն	2023թ.	2024թ.	Տարբերություն
Ընդհանուր	1388,888,290,998.2	1,506,357,463,187.4	117,469,172,189.2	26,659,214,624.2	53,110,210,883.9	26,450,996,259.7
Եվրո	156,872,260,222.3	136,587,260,296.4	-20,284,999,925.9	33,963,480.1	29,845,042.1	-4,118,438.0
Դոլար	633,585,584,969.6	516,324,811,786.9	-117,260,773,182.7	195,787,178.1	148,952,592.5	-46,834,585.6
Ռուբլի	598,430,445,806.3	853,445,391,104.1	255,014,945,297.8	26,429,463,966.0	52,931,413,249.3	26,501,949,283.3

Գործարքների ծավալը ներկայացված է ՀՀ դրամային համարժեքով

Աղուսյակ 2, Բանկերում արտարժույթի առքի միջին օրական ծավալների համեմատությունը ՀՀ դրամով

	Չհամապատասխանեցված (Unadjusted) համեմատություն			Համապատասխանեցված (Adjusted) համեմատություն	
	2023թ	2024թ	p-value	Ռեգրեսիոն գործակից [95%CI]	p-value
Ընդհանուր	8,900,000,000.0 ± 4,960,000,000.0	9,660,000,000.0 ± 7,040,000,000.0	0.138	808,000,000.0 [-297,000,000.0; 1,910,000,000.0]	0.151
Եվրո	3,020,000,000.0 ± 868,000,000.0	2,630,000,000.0 ± 800,000,000.0	0.009	-323,000,000.0 [-655,000,000.0; 8,216,245.0]	0.056
Դոլար	12,200,000,000.0 ± 3,030,000,000.0	9,930,000,000.0 ± 2,880,000,000.0	<0.001	-2,400,000,000.0 [-3,800,000,000.0; -1,000,000,000.0]	0.001
Ռուբլի	11,500,000,000 ± 3,410,000,000.0	16,400,000,000.0 ± 6,690,000,000.0	<0.001	11,700,000,000.0 [6,040,000,000.0; 17,300,000,000.0]	<0.001

Աղյուսակ 3, Փոխանակման կետերում արտարժույթի առքի ընդհանուր միջին օրական ծավալների համեմատությունը ՀՀ դրամով

	Չհամապատասխանեցված (Unadjusted) համեմատություն			Համապատասխանեցված (Adjusted) համեմատություն	
	2023թ.	2024թ.	p-value	Ռեգրեսիոն գործակից [95%CI]	p-value
ՀՀ ընդհանուր	11,800,000.0 ± 39,100,000.0	25,200,000.0 ± 76,500,000.0	<0.001	14,200,000.0 [11,000,000.0; 17,400,000.0]	<0.001
Արագածոտն	361,522.1 ± 558,566.1	225,171.0 ± 335,851.8	<0.001	-129,996.5 [-171,025.4; -88,967.7]	<0.001
Արարատ	561,095.3 ± 899,619.0	531,899.4 ± 871,877.2	0.361	-15,984.0 [-100,691.9; 68,723.8]	0.771
Արմավիր	1,499,429.0 ± 2,334,313.0	1,621,692.0 ± 2,389,510.0	0.288	159,906.0 [-17,818.4; 337,630.5]	0.078
Գեղարքունիք	313,621.5 ± 553,872.9	349,734.3 ± 566,040.6	0.243	45,051.9 [-12,371.2; 102,475.0]	0.124
Երեւան	46,500,000.0 ± 74,400,000.0	83,800,000.0 ± 138,000,000.0	<0.001	38,900,000.0 [27,300,000.0; 50,500,000.0]	<0.001
Լոռի	34,600,000.0 ± 63,000,000.0	75,100,000.0 ± 132,000,000.0	<0.001	41,800,000.0 [29,500,000.0; 54,200,000.0]	<0.001
Կոտայք	4,241,908.0 ± 8,381,788.0	25,100,000.0 ± 43,700,000.0	<0.001	21,200,000.0 [16,900,000.0; 25,500,000.0]	<0.001
Շիրակ	25,600,000.0 ± 50,600,000.0	39,900,000.0 ± 72,400,000.0	0.007	15,200,000.0 [7,585,042.0; 22,800,000.0]	<0.001
Տավուշ	253,359.6 ± 380,281.2	241,121.7 ± 359,636.2	0.360	-2,842.4 [-29,790.9; 24,106.0]	0.836

Աղյուսակ 4, Փոխանակման կետերում եվրոյի առքի միջին օրական ծավալների համեմատությունը ՀՀ դրամով

	Չհամապատասխանեցված (Unadjusted) համեմատություն			Համապատասխանեցված (Adjusted) համեմատություն	
	2023թ.	2024թ.	p-value	Ռեգրեսիոն գործակից [95%CI]	p-value
ՀՀ ընդհանուր	46,653.1 ± 108,414.2	42,514.3 ± 98,203.6	0.225	-6,891.4 [-18,328.5; 4,545.6]	0.237
Արագածոտն	4,267.9 ± 2,063.6	2,637.9 ±1,486.9	<0.001	-1,494.5 [-2,081.8; -907.1]	<0.001
Արարատ	8,978.7 ± 6,981.5	6,480.6 ± 3,562.6	0.003	-1,721.8 [-3,520.7; 77.1]	0.061
Արմավիր	18,829.4 ± 5,775.4	24,803.1 ± 7,582.7	<0.001	5,882.3 [3,639.8; 8124.8]	<0.001
Գեղարքունիք	1,166.3 ± 743.2	869.8 ± 820.5	0.009	-317.4 [-583.2; -51.6]	0.020
Երեւան	316,913.9 ± 80,018.7	308,788.9 ± 78,914.4	0.262	-4,832.6 [-31,102.3; 21,437.2]	0.717
Լոռի	10,695.1 ± 7,590.1	11,807.9 ± 8,017.5	0.187	820.1 [-1,764.5; 3,404.7]	0.532
Կոտայք	13,893.5 ± 5,979.7	17,771.2 ± 7,875.3	<0.001	4,198.7 [1,882.0; 6,515.5]	<0.001
Շիրակ	59,377.6 ±137,414.1	5,435.5 ± 8,021.8	<0.001	-67,349.9 [-99,413.5; -35,286.3]	<0.001
Տավուշ	1,274.9 ± 839.6	4,033.8 ± 3,836.4	<0.001	2,416.0 [1,382.8; 3,449.2]	<0.001

Աղյուսակ 5, Փոխանակման կետերում դոլարի առքի միջին օրական ծավալների համեմատությունը ՀՀ դրամով

	Չհամապատասխանեցված (Unadjusted) համեմատություն			Համապատասխանեցված (Adjusted) համեմատություն	
	2023թ.	2024թ.	p-value	Ռեգրեսիոն գործակից [95%CI]	p-value
ՀՀ ընդհանուր	253,610.3 ± 647,205.4	212,183.2 ± 526,764.6	0.090	-29,484.8 [-103,238.3; 44,268.8]	0.433
Արագածոտն	19,552.8 ± 6,770.2	8,677.6 ± 2,575.1	<0.001	-11,195.4 [-13,109.5; -9,281.4]	<0.001
Արարատ	24,592.5 ± 9,939.0	14,039.3 ± 6,915.0	<0.001	-7,133.9 [-10,226.4; -4,041.3]	<0.001
Արմավիր	56,971.4 ± 13,721.5	60,272.5 ± 18,041.1	0.100	3,663.5 [-2,388.7; 9,715.7]	0.234
Գեղարքունիք	11,644.4 ± 5,273.1	6,019.7 ± 2,584.9	<0.001	-5,417.9 [-7,010.4; -3,825.5]	<0.001
Երեւան	2,113,364.0 ± 482,084.2	1,662,362.0 ± 348,849.8	<0.001	-433,975.2 [-592,544.1; -275,406.4]	<0.001
Լոռի	71,693.0 ± 37,121.3	46,712.0 ± 25,303.2	<0.001	-25,576.0 [-37,747.5; -13,404.5]	<0.001
Կոտայք	87,723.1 ± 32,697.3	84,788.1 ± 24,458.4	0.263	-1,455.8 [-12,391.82; 9,480.2]	0.793
Շիրակ	110,838.1 ± 222,346.5	15,666.2 ± 8,768.3	<0.001	-117,311.5 [-178,748.; -55,874.9]	<0.001
Տավուշ	13,233.3 ± 5,394.8	11,111.7 ± 4,763.8	0.005	-499.4 [-2,402.6; 1,403.7]	0.605

Աղուսյակ 6, Փոխանակման կետերում ռուբլու առքի միջին օրական ծավալների համեմատությունը ՀՀ դրամով

	Չհամապատասխանեցված (Unadjusted) համեմատություն			Համապատասխանեցված (Adjusted) համեմատություն	
	2023թ.	2024թ.	p-value	Ռեգրեսիոն գործակից [95%CI]	p-value
ՀՀ ընդհանուր	34,600,000.0 ± 61,200,000.0	75,400,000.0 ± 117,000,000.0	<0.001	135,000,000.0 [111,000,000.0; 160,000,000.0]	<0.001
Արագածոտն	1,060,746.0 ± 448,363.0	664,197.6 ± 220,046.6	<0.001	-500,697.6 [-840,083.5; -161,311.6]	0.004
Արարատ	1,649,715.0 ± 804,964.8	1,575,178.0 ± 803,937.4	0.282	-360,182.9 [-1,103,828.0; 383,461.8]	0.340
Արմավիր	4,422,485.0 ± 1,872,108.0	4,780,001.0 ± 1,455,975.0	0.093	3,117,726.0 [1,661,595.0; 4,573,857.0]	<0.001
Գեղարքունիք	928,053.8 ± 595,453.5	1,042,313 ± 490,575.6	0.096	-377,541.2 [-874,027.9; 118,945.5]	0.135
Երեւան	137,000,000.0 ± 65,600,000.0	250,000,000.0 ± 126,000,000.0	<0.001	249,000,000.0 [167,000,000.0; 332,000,000.0]	<0.001
Լոռի	104,000,000.0 ± 68,700,000.0	225,000,000.0 ± 135,000,000.0	<0.001	87,500,000.0 [-12,500,000.0; 187,000,000.0]	0.086
Կոտայք	12,600,000.0 ± 10,300,000.0	75,300,000.0 ± 44,400,000.0	<0.001	61,600,000.0 [32,900,000.0; 90,300,000.0]	<0.001
Շիրակ	76,600,000.0 ± 61,500,000.0	120,000,000.0 ± 78,700,000.0	<0.001	-6,080,468.0 [-71,300,000.0; 59,100,000.0]	0.854
Տավուշ	745,570.5 ± 263,378.8	708,219.7 ± 244,520.5	0.180	-381,432.3 [-606,050.7; -156,813.8]	0.001

Չհամապատասխանեցված համեմատության մեջ ներկայացված են մարտի 1-ից մինչը մայիսի 17-ն ընկած ժամանակահատվածում բանկերում եւ տարադրամի փոխանակման կետերում արտարժույթի առքի օրական միջին ծավալները եւ ստանդարտ շեղումները ՀՀ դրամով, համապատասխանաբար 2023 եւ 2024 թվականներին:

Համապատասխանեցված համեմատության մեջ ներկայացված են ռեգրեսիոն գործակիցները, որոնք ներկայացնում են 2024թ.-ի եւ 2023թ.-ի նշված ժամանակահատվածների արտարժույթի առքի միջին օրական ծավալների տարբերությունները ըստ փոխարժեքի համապատասխանեցումից հետո, 95% վստահելիության սահմաններով (95%CI, confidence interval):

Հղումներ

1. ԿԲ հարցում, https://www.dropbox.com/scl/fi/8lvheigem4d7k2vu1lytn/_.pdf?rlkey=i5fqdzhamg0n9431c8utacxhn&st=nhwsv8ko&dl=0
2. ԿԲ պատասխան, https://www.dropbox.com/scl/fi/e7bs1gsg1s0xz542bqans/scan_gayane.karamyan_2024-06-12-10-19-45.pdf?rlkey=dkd161hj4xyeje7cx183j1jnx&st=yufqdwop&dl=0
3. Տարադրամի փոխանակման կետերի գործարքները, https://www.dropbox.com/scl/fi/wx6l1mtbnb5kidhx5y95x/Ex.Points_in_Armenia_-_04.06.2024_17.31.33-1.xlsx?rlkey=xz612sd33dl9y2f3cdhh5m9n2&st=6odkcyv7&dl=0
4. Արխիվ, Շուկայական Գործառություններ, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ, https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx
5. Արժույթային շուկայի սփոթ շրջանառությունը, https://www.dropbox.com/scl/fi/gm180xvd4ypzzs2tukk07/FOREX-ARM_Daily.xls?rlkey=l2sa74mebvi75cb0p8ex5527r&st=vlm915ix&dl=0
6. ԿԲ գրություն, https://www.dropbox.com/scl/fi/k4spf3jakz4sltsmmcdxy/_2024-07-25-09-28-53-1-1.pdf?rlkey=lhnqid8w2y4pbfyu0gbj6foc3&st=zdyjevav&dl=0
7. ԿԲ բացատրություն, https://www.dropbox.com/scl/fi/on48nu094umgrzbqgszct/scan_gayane.karamyan_2024-08-07-16-47-01-1.pdf?rlkey=fxvmx6902uothpnz1tsl8uxbh&st=hq7yahq1&dl=0
8. Բանկային տվյալների վերլուծության Ստատայի ֆայլ, https://www.dropbox.com/scl/fi/9jtfp3tr933od4xc4tt5r/Bank_data.dta?rlkey=jeebr60msdwjj75cnm02wch8i&st=wleu5juk&dl=0
9. Փոխանակման կետերի վերլուծության Ստատայի ֆայլ, https://www.dropbox.com/scl/fi/kgo734xtz5k926uw3c3u5/Non_bank_data.dta?rlkey=rol8zznr6c7ewqhn0ft7dfcm2&st=j7oz6fmy&dl=0
10. Ստատա ծրագրով վերլուծության հրահանգները, https://www.dropbox.com/scl/fi/2tuxpmdhbfz02gnnvcoks/Stata-commands.docx?rlkey=qww87xxbwcm2c5ycqc1rtvqmz&st=sko53rft&dl=0

---

[i] Նարեկ Վերանյանը հանդիսանում է անկախ հետազոտող, սույն հետազոտությունը կատարելիս չի ներկայացնում որեւէ կազմակերպություն կամ հաստատություն:

Սույն հետազոտության իրականացման համար հետազոտողը չի ստացել վարձատրություն, դրամաշնորհ, այլ դրամական կամ ոչ դրամական շահույթ: Հետազոտությունն ունի զուտ ակադեմիական, գիտահետազոտական նպատակ:

Հեղինակը երախտագետ է «Ազատ քաղաքացի» քաղաքացիական նախաձեռնությունների աջակցության կենտրոնի համակարգող Հովսեփ Խուրշուդյանին ՀՀ ԿԲ հարցման եւ տվյալների բազայի ձեռքբերման համար: